

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Մովսես Վարդանյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

«Հայկական Ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-ՀԱԷԿ-ի տնօրեն

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Ավստրիա, քաղաք Վիեննա, սեպտեմբերի 15-ից 19-ը, 2025թ.

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ)

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր համաժողովի 69-րդ նստաշրջանին

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր համաժողովը միջուկային էներգետիկայի և անվտանգության ոլորտում ամենամյա խոշորագույն ու ազդեցիկ հարթակներից է: Այն ավանդաբար գումարվում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբերին Վիեննայում և համախմբում է գործակալության բոլոր անդամ պետություններին՝ անկախ նրանց աշխարհագրական դիրքից, տնտեսական հնարավորություններից կամ էներգետիկ զարգացման ուղիներից: Համաժողովի հիմնական առաքելությունն է քննարկել միջուկային էներգիայի խաղաղ կիրառման, միջուկային անվտանգության և չտարածման քաղաքականության հիմնահարցերը՝ ձևավորելով համաշխարհային օրակարգ:

Այս համաժողովը առանձնանում է նրանով, որ ոչ միայն ամփոփում է ԱԷՄԳ-ի մեկ տարվա գործունեության արդյունքները, այլև սահմանում է կազմակերպության հետագա աշխատանքի ռազմավարական ուղղությունները: Այստեղ ընդունվող որոշումները և ելույթներում հնչող դիրքորոշումները մեծապես ազդում են ինչպես առանձին երկրների միջուկային քաղաքականության ձևավորման, այնպես էլ միջազգային միջուկային էներգետիկայի զարգացման ընդհանուր միտումների վրա:

69-րդ համաժողովը առանձնահատուկ նշանակություն ունեցավ՝ տեղի ունենալով այն ժամանակ, երբ միջուկային էներգետիկան աշխարհում կանգնած է նոր մարտահրավերների առաջ: Դրանց թվում են աճող էներգետիկ պահանջարկը, նորարարական տեխնոլոգիաների ներդրումը և անվտանգության միջազգային չափանիշների կատարելագործումը: Նստաշրջանը հնարավորություն ընձեռեց

անդամ-պետություններին ներկայացնել իրենց ձեռքբերումները, քննարկել առաջադեմ լուծումներ և խորացնել համագործակցությունը՝ միաժամանակ ամրապնդելով միջուկային կյուբերի անվտանգ կառավարման միջազգային մեխանիզմները:

Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը համաժողովում ևս մեկ անգամ փաստեց երկրի հանձնառությունը՝ ապահովելու միջուկային անվտանգության բարձր մակարդակ և նպաստելու միջուկային էներգիայի խաղաղ կիրառմանը: Հայկական ԱԷԿ-ը, լինելով Հայաստանի էներգետիկ համակարգի առանցքային օղակը, համաժողովի համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի:

ՀՀ պատվիրակությունը գլխավորում էր՝ Ավստրիայի և Սլովակիայի Հանրապետություններում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան, Վիեննայի միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցիչ Անդրանիկ Հովհաննիսյանը: Պատվիրակության կազմում ընդգրկված էին նաև ՀՀ ՄԱԿԿ նախագահի տեղակալ Վահե Գրիգորյանը, «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանը, «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ գլխավոր տնօրեն Վահրամ Պետրոսյանը, ՀՀ մշտական ներկայացուցչության խորհրդական Արսեն Միքայելյանը և ես՝ Մովսես Վարդանյանս:

69-րդ Գլխավոր համաժողովը ձևավորեց հստակ տեսլական գործակալության առաջիկա գործունեության համար: Վերահաստատվեց, որ ԱԷՄԳ-ի ուշադրության կենտրոնում լինելու են միջուկային նորարարության խթանումը, անդամ պետությունների միջև համագործակցության խորացումը և միջուկային էներգիայի անվտանգ զարգացումը:

Հայաստանի մասնակցությունը այս համաժողովին ոչ միայն ամրապնդեց երկրի դիրքերը միջազգային միջուկային ընտանիքում, այլև ցույց տվեց, որ Հայկական ԱԷԿ-ը շարունակում է մնալ վստահելիության և տոկունության խորհրդանիշ: Այն ոչ միայն ապահովում է երկրի էներգետիկ անվտանգությունը, այլև դնում է հիմքեր ապագա սերունդների համար՝ ապահովելով կայուն և անվտանգ զարգացում:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հայաստանի պատվիրակությունը համաժողովին մասնակցեց ակտիվ և նպատակային օրակարգով՝ ներկայացնելով երկրի դիրքորոշումները և առաջնահերթությունները: Նստաշրջանի առաջին օրը հայկական պատվիրակությունը ներկա գտնվեց Գլխավոր կոնֆերանսի բացման լիազումար նիստին, իսկ օրվա երկրորդ կեսում ակտիվորեն մասնակցեց կոնֆերանսի աշխատանքների շարունակական քննարկումներին: Այս տարի ևս համաժողովի առանցքային թեմաներն ընդգրկում էին միջուկային էներգիայի անվտանգ և խաղաղ օգտագործումը, միջուկային զենքերի չտարածման համակարգի ամրապնդումը, տեխնիկական համագործակցության ծրագրերի ընդլայնումը և նոր միջուկային տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները: Կայանի շահագործման ժամկետի երկարացումը, նոր միջուկային բլոկների կառուցման ծրագրերը և դրանց հետ կապված անվտանգության միջոցառումները ներկայացվեցին միջազգային հանրությանը որպես ռազմավարական առաջնահերթություններ, որոնք

ուղղված են երկրի էներգետիկ անկախության, կայունության և զարգացման ապահովմանը:

Անդրադառնալով համագործակցության նոր ծրագրերին՝ հայկական պատվիրակությունը ընդգծեց ԱԷՄԳ-ի հետ փորձագիտական առաքելությունների նշանակությունը, որոնք վերաբերում են շահագործման ժամկետի երկարացման անվտանգության գնահատմանը, կայանի սեյսմիկ անվտանգության բարձրացմանը, արտաքին իրադարձությունների ազդեցության վերլուծությանը և նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը: ԱԷՄԳ-ի գլխավոր համաժողովում Հայաստանի ներկայությունը ընդգծեց այն հանգամանքը, որ միջուկային էներգիան դիտարկվում է ոչ միայն որպես էներգետիկ համակարգի ներկա հենասյուն, այլև որպես երկրի ապագա զարգացման ռազմավարական ուղղություն, որտեղ առաջնահերթություն են համարվում անվտանգությունը և միջազգային համագործակցությունը:

Համաժողովի երկրորդ օրը, բացի լիազուրկ նիստերից, տեղի ունեցան մի շարք կարևոր երկկողմ հանդիպումներ: Հայկական պատվիրակությունը հանդիպեց Վրաստանի միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահ Նինո Ուտիաշվիլիի հետ: Քննարկվեցին երկու երկրների կարգավորող մարմինների համագործակցության արդյունավետ ուղիները, լավագույն փորձի փոխանակման հնարավորությունները և միջուկային անվտանգության համատեղ նախաձեռնություններն ու քայլերը: Պատվիրակությունը շեշտեց երկարաժամկետ համագործակցության նշանակությունը՝ տարածաշրջանում միջուկային անվտանգության բարձր մակարդակը պահպանելու նպատակով: Կայացավ հանդիպում ԱԷՄԳ-ի երաշխիքների պահպանման դեպարտամենտի ղեկավարության հետ: Քննարկման ընթացքում ԱԷՄԳ ներկայացուցիչները բարձրացրին աշխատած միջուկային վառելիքի պահման ավազաններում ջրի թափանցելիության հարցը, ինչպես նաև անդրադարձան վառելիքի չոր պահեստարան տեղափոխման առաջիկա ծրագրերին: Նշվեցին նաև ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի աշխատած վառելիքի պահման ավազանում տեսչական ստուգումներ իրականացնելու հետ կապված առկա դժվարությունները: ԱԷՄԳ-ի կողմից տեղեկացվեց, որ 2026 թվականի հունվարից տեսչական ստուգումների թիվը մեկով ավելանալու է:

Հայկական կողմը ներկայացրեց ձեռնարկվող քայլերը՝ ուղղված պահման ավազաններում ջրի մաքրման համար նոր ֆիլտրերի ձեռքբերմանը: Որպես արդյունք՝ պայմանավորվեց, որ հայկական կողմը սահմանված կարգով ԱԷՄԳ-ին կներկայացնի աշխատած միջուկային վառելիքի նոր պահեստարանի կառուցման, ինչպես նաև նոր էներգաբլոկի հնարավոր կառուցման վերաբերյալ թարմացված տեղեկատվություն:

Մեր պատվիրակությունը հանդիպեց Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ:

Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց ԵՀ հետ ընթացող և նախապատրաստական փուլում գտնվող ծրագրերին, ինչպես նաև նոր ծրագրի մշակման անհրաժեշտությանը: Հատուկ շեշտվեց Հայաստանի սթրես-թեստի ազգային միջոցառումների պլանի իրականացման ընթացքը: Ներկայացվեց, որ ԵՄ-ի կողմից

նախատեսվում է առաքելություն՝ ստուգելու այդ միջոցառումների կատարման ընթացքը, որի համար արդեն իսկ տրամադրվել է հարցաշար:

ԵՄ պատվիրակությունը մտահոգություն հայտնեց այն հանգամանքի շուրջ, որ ՀՀ նոր միջուկային էներգաբլոկի համար ընտրվել է նույն հարթակը, որտեղ սեյսմիկ ազդեցության մակարդակը բարձր է, և խնդրեց դա դիտարկել որպես պաշտոնական հաղորդագրություն (message):

Հայկական կողմը նշեց, որ համաձայն ՀՀ օրենսդրության՝ նոր միջուկային տեղակայանքի հարթակը պետք է անցնի լիցենզավորման գործընթաց: Բացի այդ, նախագծի ընտրության և տեխնիկական առաջադրանքի մշակման ընթացքում պարտադիր հաշվի են առնվելու հարթակի բնութագրերը, ներառյալ սեյսմիկ պաշտպանությունը՝ հիմնված ՀՀ ազգային պահանջների և ԱԷՄԳ ուղեցույցերի վրա:

Հայկական կողմը նաև տեղեկացրեց, որ ԱԷՄԳ ազգային ծրագրի շրջանակում փորձագետները դիտարկում են «ՀՀ կառավարության որոշումը միջուկային նոր էներգաբլոկի (էներգաբլոկների) հրապարակի անվտանգության պահանջները» փաստաթղթի վերանայված տարբերակը: Բացի այդ, նախատեսվում է կազմակերպել ազգային աշխատաժողով ԱԷՄԳ փորձագետների մասնակցությամբ, որի ընթացքում կներկայացվեն հարթակի ուսումնասիրության և բնութագրերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև «Հարթակի և արտաքին ազդակների նախագծի վերլուծություն» առաքելության նախապատրաստական քայլերը: Նշվեց, որ տվյալ առաքելությունը նպատակահարմար է իրականացնել նախքան հարթակի լիցենզավորման համար կարգավորող մարմնին դիմելը:

Նույն օրը կայացավ հանդիպում ԱՄՆ էներգետիկայի քարտուղարի՝ միջուկային էներգիայի հարցերով փոխտեղակալ Մայքլ Գոֆֆի հետ: Քննարկման ընթացքում ուշադրության կենտրոնում էին ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի անվտանգության բարձրացման միջոցառումները, ինչպես նաև նոր միջուկային էներգաբլոկների կառուցման ծրագիրը: Միաժամանակ ընդգծվեց անվտանգության բարձրացմանն ուղղված նոր նախաձեռնությունների անհրաժեշտությունը: Ամերիկյան կողմը պատրաստակամություն հայտնեց դիտարկել ռեակտորի պաշտպանական համակարգի մոդիֆիկացիայի ծրագրերը:

Բացի այդ, ամերիկյան կողմը ներկայացրեց Հայաստանի և ԱՄՆ միջև 123 համաձայնագրի ստորագրման ընթացիկ փուլը: Նշվեց, որ համաձայնագրի ստորագրումից առաջ արդեն իսկ հանվել է ՓՄՌ նախագծողների նկատմամբ տեխնոլոգիաների արտահանման վերահսկողությունը (Export Control), ինչը հնարավորություն է տալիս Հայաստանին առանց խոչընդոտների համագործակցել ՓՄՌ նախագծողների հետ:

Երրորդ օրը ազգային ելույթով հանդես եկավ Ավստրիայի և Սլովակիայի Հանրապետություններում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանը: Իր խոսքում դեսպանը մանրամասն ներկայացրեց Հայաստանի ձեռնարկած քայլերը՝ ուղղված միջուկային էներգետիկայի անվտանգության բարձրացմանը և ՀԱԷԿ-ի երկարաժամկետ ու հուսալի շահագործման ապահովմանը:

Նա ընդգծեց ԱԷՄԳ-ի հետ շարունակական համագործակցության կարևորությունը, մասնավորապես՝ փորձագիտական առաքելությունների ընդունման, տեխնիկական աջակցության և կարողությունների զարգացման ծրագրերի շրջանակներում: Դեսպանը վերահաստատեց Հայաստանի անշեղ հանձնառությունը միջազգային միջուկային անվտանգության և ոչ տարածման ռեժիմների հանդեպ՝ նշելով միջուկային էներգիայի առանցքային դերը երկրի էներգետիկ անկախության, տնտեսության կայուն զարգացման և շրջակա միջավայրի պաշտպանության գործում: Ելույթի ավարտին նա ընդգծեց Հայաստանի պատրաստակամությունը շարունակելու սերտ համագործակցությունը ԱԷՄԳ-ի և գործընկեր երկրների հետ՝ համատեղ քայլեր ձեռնարկելով խաղաղ ու անվտանգ միջուկային էներգետիկայի զարգացման ուղղությամբ:

Հանդիպում տեղի ունեցավ ԱԷՄԳ Արտաքին ազդակների անվտանգության բաժնի ղեկավարի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեց ԱԷՄԳ ազգային ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքների ընթացքը: Մասնավորապես, ԱԷՄԳ փորձագետները ուսումնասիրում են «ՀՀ կառավարության որոշումը միջուկային նոր էներգաբլոկի (էներգաբլոկների) հրապարակի անվտանգության պահանջները» փաստաթղթի վերանայված տարբերակը, որի վերաբերյալ հաշվետվությունը նախատեսվում է պատրաստել հոկտեմբերին:

Կողմերը նաև պայմանավորվեցին 2026 թվականի առաջին եռամսյակում անցկացնել ազգային աշխատաժողով, որի ընթացքում կներկայացվեն հարթակի ուսումնասիրության և բնութագրերի պահանջները: Աշխատաժողովի ընթացքում ԱԷՄԳ փորձագետների հետ կքննարկվեն «Հարթակի և արտաքին ազդակների նախագծի վերլուծություն» առաքելության նախապատրաստական քայլերը, իսկ հետագայում նախատեսվում է իրականացնել նաև այդ առաքելությունը:

Հայկական պատվիրակությունը մասնակցեց մի շարք կարևոր աշխատանքային քննարկումների՝ կապված միջուկային անվտանգության և ՀԱԷԿ-ի երկարաժամկետ զարգացման ծրագրերի հետ: Հանդիպում ունեցանք ԱԷՄԳ միջուկային ապահովության դեպարտամենտի ներկայացուցիչ Պաոլո Կոնտիի հետ: Քննարկվեց Հայաստանում 2026 թվականի առաջին կեսին նախատեսվող աշխատաժողովի կամ SEED վերանայման առաքելության կազմակերպման հնարավորությունը՝ փոքր մոդուլային ռեակտորների (SMR) տեղակայման հարթակի գնահատման նպատակով: Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև տեխնիկական չափանիշներին, գնահատման մեթոդաբանությանը, հնարավոր ռիսկերին և վերահսկողության գործընթացներին, ինչպես նաև միջազգային փորձի ներգրավման անհրաժեշտությանը ծրագրի արդյունավետ իրականացման համար:

Քննարկումներ կայացան նաև Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ: Հայկական պատվիրակությունը մանրամասն քննարկեց ՀԱԷԿ-ի անվտանգության բարձրացմանն ուղղված երկարաժամկետ և բարդ միջոցառումների իրականացման ուղիները: Զրույցի ընթացքում շեշտվեց ներդրումների, տեխնիկական աջակցման,

փորձի փոխանակման և համագործակցության պլանավորման կարևորությունը՝ ուղղված գործող ռիսկերի նվազեցմանը և կայանի անվտանգության ամենաբարձր մակարդակի ապահովմանը: Այս քննարկումների արդյունքում հաստատվեցին կոնկրետ քայլեր և նախանշվեցին հետագա համագործակցության ուղղությունները՝ ներառյալ միջազգային փորձագետների ներգրավումը, տեխնիկական գնահատումների համակարգումը և ծրագրերի իրականացումը ամուր Ժամանակացույցի և արդյունավետ մոնիթորինգի ներքո:

Նստաշրջանի չորրորդ օրը հայկական պատվիրակությունը մասնակցեց մի շարք կարևոր միջոցառումների: Օրվա սկզբում կնքվեց Կարգավորող մարմինների տարեկան հանդիպումը (VIC), որի ընթացքում քննարկվեցին միջուկային կարգավորման համաշխարհային միտումները, ազգային փորձի փոխանակման հնարավորությունները և համագործակցության նոր հարթակները: Այնուհետև պատվիրակությունը մասնակցեց աշխատանքային քննարկման ԱԷՄԳ երաշխիքների դեպարտամենտում, որտեղ շեշտադրվեց երաշխիքային միջոցառումների արդյունավետության բարձրացումը և հետագա համագործակցության հեռանկարները՝ ընդգրկելով ՀՀ ՄԱԿ-ն, Հայկական ԱԷԿ-ը և ՀՀ մշտական ներկայացուցչությունը:

Օրվա ընթացքում շարունակվեց նաև Գլխավոր կոնֆերանսի աշխատանքը, իսկ Բոլորի կոմիտեում (CoW) ընթացան բանաձևերի նախագծերի քննարկումներ (BR-A): Հայաստանի պատվիրակությունը ակտիվորեն ներգրավվեց քննարկումներում՝ ներկայացնելով երկրի տեսակետները և կարևորելով անվտանգությունն ու միջուկային էներգիայի խաղաղ կիրառման, ինչպես նաև միջազգային համագործակցության հարցերը:

Նստաշրջանի վերջին օրը հայկական պատվիրակությունը մասնակցեց եզրափակիչ նիստերին, որտեղ ամփոփվեցին ամբողջ նստաշրջանի ձեռքբերումներն ու քննարկումները, վերլուծվեցին հիմնական ուղենիշներն ու եզրահանգումները, և հաստատվեցին ԱԷՄԳ-ի ապագա առաջնահերթությունները՝ նորարարության, անվտանգ ընդլայնման և միջազգային համագործակցության ոլորտներում: Այս ամփոփիչ նիստը ևս մեկ անգամ ընդգծեց միջուկային էներգիայի խաղաղ օգտագործման կարևորությունը, ինչպես նաև Հայաստանի ու միջազգային գործընկերների վճռականությունը՝ ապահովելու անվտանգ, պատասխանատու և կայուն զարգացման ուղիները:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ԱԷՄԳ-ի առաջարկած տեխնիկական համագործակցության ծրագրերը հնարավորություն են ընձեռում հայ մասնագետներին զարգացնել իրենց հմտությունները միջազգային չափանիշներին համապատասխան, յուրացնել Ժամանակակից տեխնոլոգիաներ, մասնակցել առաջադեմ ուսուցողական ծրագրերի և ձեռք բերել փորձ, որը կենտրոնացած է ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործման ապահովման վրա: Այս համագործակցությունը ուղղված է ոչ միայն գործող բլոկներին

արդյունավետ և անվտանգ շահագործմանը, այլև ապագա միջուկային էներգաբլոկների կառուցման համար անհրաժեշտ գիտելիքների և փորձի համալրմանը:

Կայանի շահագործման ժամկետի երկարացումը, նոր միջուկային բլոկների կառուցման ծրագրերը և դրանց հետ կապված անվտանգության միջոցառումները ներկայացվեցին միջազգային հանրությանը որպես ռազմավարական առաջնահերթություններ, որոնք ուղղված են երկրի էներգետիկ անկախության, կայունության և զարգացման ապահովմանը:

2025 թվականին նախատեսվում է իրականացնել մի շարք կարևոր միջոցառումներ՝ ԱԷՄԳ-ի և ՀԱԷԿ-ի համագործակցության շրջանակներում: Դրանց թվում են՝ ԱԷՄԳ-ի փորձագիտական առաքելություն շահագործման ժամկետի երկարացման անվտանգության գնահատման նպատակով, SALTO առաքելություն կայանի հարթակի նախագծման և արտաքին ազդեցությունների վերլուծության ուղղությամբ, ինչպես նաև գործընկերային այց՝ շարունակական կատարելագործման ծրագրի շրջանակում: Բացի այդ, 2026 թվականին նախատեսվում է ԱԷՄԳ-ի հերթական փորձագիտական առաքելություն՝ կենտրոնացած ՀԱԷԿ-ի սեյսմիկ անվտանգության բարձրացման վրա:

ՀԱԷԿ-ի դերը գլխավոր համաժողովում կարելի է դիտարկել նաև որպես Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդում միջուկային էներգետիկայի ոլորտում: Մեր երկիրը ներկայանում է որպես պատասխանատու գործընկեր, որը ոչ միայն հետևողականորեն իրականացնում է ԱԷՄԳ-ի պահանջներն ու ստանդարտները, այլև ակտիվորեն ներգրավված է միջազգային օրակարգի ձևավորման գործընթացում: Սա թույլ է տալիս Հայաստանին ակտիվորեն մասնակցել համաշխարհային քննարկումներին, ներկայացնել սեփական առաջնահերթությունները և ստանալ միջազգային աջակցություն կարևորագույն ծրագրերի իրականացման համար:

69-րդ գլխավոր համաժողովի ընթացքում հայկական պատվիրակության ակտիվ մասնակցությունը ևս մեկ անգամ հաստատեց, որ Հայաստանը դիտարկում է միջուկային էներգիան ոչ միայն որպես ներկա էներգետիկ համակարգի հենասյուն, այլև որպես երկրի ապագա զարգացման ռազմավարական ուղղություն: ՀԱԷԿ-ի ներկայությունն ու մասնակցությունը համաժողովին հանդիսացավ հարթակ՝ ամրապնդելու համագործակցության կապերը ԱԷՄԳ-ի, ԵՄ-ի, ԱՄՆ-ի և այլ միջազգային գործընկերների հետ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՅՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԱԷՄԳ-ի 69-րդ գլխավոր համաժողովի ավարտը մեկ անգամ ևս հաստատեց, որ Հայաստանը, լինելով փոքր պետություն, կրում է մեծ պատասխանատվություն և ունի նշանակալի դերը միջուկային էներգետիկայի համաշխարհային համակարգում: Մեր երկրի ակտիվ մասնակցությունը ոչ միայն վկայում է հանձնառության մասին՝

շարունակելու միջուկային էներգիայի անվտանգ և խաղաղ զարգացումը, այլև ընդգծում է այն սկզբունքը, որ ապագան պետք է կառուցվի վստահության, համագործակցության և անվտանգության վրա:

Հայկական Ատոմային Էլեկտրակայանը, որպես երկրի էներգետիկ կայունության և անկախության խորհրդանիշ, ներկայացնում է Հայաստանը միջազգային հարթակներում ոչ միայն որպես ազգային հպարտություն, այլև որպես վստահելի գործընկեր, որի փորձը և հաստատակամությունը գնահատվում են աշխարհի առաջատար միջազգային կառույցների կողմից: Այսօր ՀԱԷԿ-ը ծառայում է որպես կամուրջ՝ միացնող անցյալի ձեռքբերումները՝ ապագայի հնարավորություններին, ապահովելով Հայաստանի համար էներգետիկ անվտանգություն և նոր զարգացման հեռանկարներ:

Հայաստանի պատվիրակության մասնակցությունը համաժողովին գնահատվեց բարձր արդյունավետությամբ: Քննարկումները և երկկողմ ու բազմակողմ բանակցությունները ընթանան կառուցողական և առողջ մթնոլորտում, նպաստեցին գործընկերային կապերի ամրապնդմանը և նոր պայմանավորվածությունների ձեռքբերմանը, ինչպես նաև ուժեղացրին Հայաստանի դիրքը միջազգային միջուկային համայնքում:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի
առաջին տեղակալ- ՀԱԷԿ-ի տնօրեն



Մ. Վարդանյան